ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.06.2017թ. թիվ 03/73-3/10305-17 գրությամբ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 01.06.2017թ. թիվ ԴՎԱ/1621 գրության հիման վրա, 07.06.2017թ. թիվ 03/73-3/10305-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն 16.06.2017թ. գրությամբ Խորհրդին խնդրել է Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում հետևյալ պատճառաբանությամբ.

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԱՊՁԲ-5/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատման արդյունքում Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, այնուհետև Պատվիրատուի կողմից՝ էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով, պահանջվել է ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված և հավելված թիվ 5-ով նախատեսված փաստաթղթերը, որի վերջնաժամկետ է սահմանված եղել մինչև 12.05.2017թ.:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետից շուտ Ընկերության պաշտոնական idealtravel@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից, ծանուցման մեջ նշված r.mardoyan@mil.am պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին 10.05.2017թ. ուղարկել է որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և հավելված թիվ 5-ը՝ «pdf» տիպի ֆայլով:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն չի խախտել:

Ընկերությունը վերը նշված գրությամբ Խորհրդին է ներկայացրել Ընկերության՝ idealtravel@mail.ru, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ r.mardoyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 10.05.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.06.2017թ. ժամը 15:00-ի նիստի վերաբերյալ, Ընկերության լիազորված ներկայացուցիչը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 16.06.2017թ. գրությամբ Խորհրդին ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկ-ները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.06.2017թ. թիվ ԴՎԱ/1621 գրությամբ ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Օսա-ԱԿ» ՄՄ-ի ծածկոցների (անջրանցիկ բրեզենտներ) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԱՊՁԲ-5/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր էին ներկայացրել «Իդեալ Թրավել» և «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերությունները:

Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն, որին «armeps» էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 06.05.2017թ. առաջարկվել է հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը):

Սահմանված ժամկետում «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի կողմից որևէ փաստաթուղթ չի ներկայացվել: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը, 15.05.2017թ. հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, մերժել է Ընկերության հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.06.2017թ. ժամը 15:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2017/17 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՍՑ-ԱՄ-2017/17 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Օսա-ԱԿ» ՄՄ-ի ծածկոցների (անջրանցիկ բրեզենտներ) ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԱՊՁԲ-5/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Նույն արձանագրության 4.2 կետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից, 06.05.2017թ. ծանուցմանն ի պատասխան, հրավերով նախատեսված ժամկետում և կարգով չեն ներկայացվել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, մերժել է «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ին:

5. «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն 16.06.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Ընթացակարգի գնահատման արդյունքում Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, այնուհետև Պատվիրատուի կողմից էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով պահանջվել է ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով

նախատեսված և հավելված թիվ 5-ով նախատեսված փաստաթղթերը, որի վերջնաժամկետ է սահմանված եղել մինչև 12.05.2017թ.:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետից շուտ Ընկերության պաշտոնական idealtravel@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ծանուցման մեջ նշված r.mardoyan@mil.am պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին 10.05.2017թ. ուղարկել է որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և հավելված թիվ 5-ը՝ «pdf» տիպի ֆայլով:

Ընկերությունը վերը նշված գրությամբ Խորհրդին է ներկայացրել Ընկերության՝ idealtravel@mail.ru, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ r.mardoyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 10.05.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 07.06.2017թ. թիվ 03/73-3/10305-17 գրությունը, << պաշտպանության նախարարության 01.06.2017թ. թիվ ԴՎԱ/1621 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ընկերության՝ idealtravel@mail.ru, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ r.mardoyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 10.05.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ ***հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: ***Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 7.5 կետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է*** հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ***Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը,*** ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած ***Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական***

էլեկտրոնային փոստին՝ r.mardoyan@mil.am, ուղարկում է սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Օսա-ԱԿ» ՄՄ-ի ծածկոցների (անջրանցիկ բրեզենտներ) ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԱՊՁԲ-5/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 4.2 կետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից, Պատվիրատուի 06.05.2017թ. ծանուցմանն ի պատասխան, հրավերով նախատեսված ժամկետում և կարգով չեն ներկայացվել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, մերժել է «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ին:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն 16.06.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Ընթացակարգի գնահատման արդյունքում Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, այնուհետև Պատվիրատուի կողմից էլեկտրոնային ոչ ավտոմատ

ծանուցման միջոցով պահանջվել է ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված և հավելված թիվ 5-ով սահմանված փաստաթղթերը, որի վերջնաժամկետ է սահմանված եղել մինչև 12.05.2017թ.:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետից շուտ Ընկերության պաշտոնական idealtravel@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ծանուցման մեջ նշված r.mardoyan@mil.am պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին 10.05.2017թ. ուղարկել է որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և հավելված թիվ 5-ը՝ «pdf» տիպի ֆայլով:

Ընկերությունը վերը նշված գրությամբ Խորհրդին է ներկայացրել Ընկերության՝ idealtravel@mail.ru, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ r.mardoyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 10.05.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը:

Այսպես, Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ ***հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: ***Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 7.5 կետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է*** հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ***Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը,*** ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած ***Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ r.mardoyan@mil.am, ուղարկում է սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:***

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Խորհուրդն, ուսումնասիրելով «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, գտնում է, որ Ընկերությունը «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԱՊՁԲ-5/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն Պատվիրատուի՝ r.mardoyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեից ***06.05.2017թ.*** ստացված ծանուցմանն

ի պատասխան՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, ***10.05.2017թ.*** սահմանված ժամկետում և կարգով Պատվիրատուին է ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որին ի հավաստումն Ընկերությունը 16.06.2017թ. գրությանը կից Խորհրդին է ներկայացրել ***Ընկերության՝ idealtravel@mail.ru, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ r.mardoyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 10.05.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը,*** հետևաբար Ընկերությանն այս հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 07.06.2017թ. թիվ 03/73-3/10305-17 գրությամբ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01225461) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ